ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ԱՐՑԱԽՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿԱԹՈՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ

ԺԸ դ. կեսերին Դիզակի հմուտ դիվանագետ ու զորավար Մելիք Եգանը Նադիր Շահի (իշխել է 1735-1747 թթ.) հովանավորությունից օգտվելով՝ համախմբեց Արցախի Գյուլիստան, Վարանդա, Խաչեն ու Ջրաբերդ գավառների մելիքներին եւ ստեղծեց Մահալ-Ե-Խամսե «Խամսայի մելիքություն» վարչա-տնտեսական ու քաղաքական միավորը[1], որն իր գոյության ընթացքում դարձավ Արցախում հայ ժողովրդի ինքնության խորհրդանիշներից մեկը:

Սակայն նրա մահից հետո՝ 1744 թվականին, ազգապահպան մտածողությամբ ձեւավորված կարեւոր այդ կառույցն ասպիճանաբար փլուզվեց եւ առաջին ճեղքն իրականացավ Վարանդա գավառի Մելիք Շահնազարի կողմից: Դավաճանելով իր ուխտին՝ նա միավորվեց ջիվանշիրցի (ցեղանուն) Փանահին եւ ողջ տարածաշրջանին տիրելու ակնկալիքով՝ կազմակերպեց խարդավանքների զորեղ մի ցանց, սեպ խրեց ազգածին այդ արժեքին ու նպաստեց դրա ասպիճանական քայքայմանը:

Ավատատիրական բովանդակությամբ ու ազգային գիտակցությամբ օժտված «շղթայից» պոկված հաջորդ օղակն եղավ Խաչենը: Այդ գավառի Խընձերիստան գյուղի կառավարիչ Միրզա խանը, գայթակղվելով Մելիք Շահնազարի առատ խոստումներով (նրան պիտի վստահվեր ողջ գավառի տնօրինությունը), խարդախությամբ զոհեց Ալլահվերդի Մելիքին:

Թշնամուն դեմ առ դեմ մնացին Գյուլիստանի, Ջրաբերդի, Դիզակի մելիքությունները եւ եթե առաջին գավառները հարակից տարածքներ էին, ապա Դիզակը, գտնվելով երկրի հարավում, տագնապների պարագային ռազմավարական եւ այլ խնդիրներ լուծելիս բախվում էր հաղորդակցման դժվարությունների: Մասամբ այս հանգամանքով պայմանավորվեց մելիքների ուժային կարողությունների ջլատումը, տարածաշրջանի մասնատումը, որն իր հերթին հասցրեց անկախության կորստին:

ԺԸ դ. կեսերից մինչեւ ԺԹ դ. սկիզբը Արցախն ընդգրկված էր Պարսկաստանի Աղա-Մուհամմադ, Իբրահիմ խաների եւ Ռուսաստանի միջեւ տարածքների բռնազավթման համար իրականացվող ռազմարշավների ոլորտը: Ռազմական այդ անցքերի մանրամասները լուսաբանված են համապատասխան գրականության էջերում[2]:

---

1 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երեւան, 1972, էջ 186:

2 Տե՛ս **Мирза Адигезал-бек,** Карабаг наме, Баку, 1950, **Бутков,** Материалы для новой истории Кавказа с 1722 по 1803, часть 2, СПб, 1869, **Լեո,** Խամսայի կործանումը, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան,

Արցախում արդեն հաստատված Փանահը՝ ԺԸ դ. կեսերին, եւ նրա որդին՝ նույն դարի 60-ականներից մինչեւ ԺԹ դ. սկզբները ներքին եւ արտաքին խնդիրներ լուծելիս հարկադրված էին ապավինել՝ թեկուզ քաղաքականապես թուլացած, բայց տակավին իրենց կենսունակությունը պահպանած հայ մելիքների զինված ուժերին եւ ընդդիմադիր հարձակողական գործընթացների ժամանակ դիմում էին նրանց օգնությանը: Պահպանված փաստաթղթերից մեկում հիշատակվում է, որ հայերի ռազմական ուժերը ԺԸ դ. հասնում էին 4500, իսկ ջիվանշիրցիներինը (քոչվոր ցեղերինը)՝ 2500, բայց քանի որ հայերը միասնական չէին, ջիվանշիրցիները նրանց ենթարկում են[3]:

Արցախի մելիքների օժանդակությունը զգալի է եղել նաեւ 80-90-ականներին, Աղա Մուհամմադ խանի կողմից Շուշի բերդաքաղաքի պաշարման ժամանակ. «Ղարաբաղի հեծյալ եւ հետիոտն գնդերը, ցեղերի եւ գյուղացիների առաջնորդները, Վարանդայի, Դիզակի եւ Խաչենի մահալների մելիքները մանր ջոկատներով հարձակվում են դրզբլբաշ զորքի վրա, խլում նրանց ձիերն ու գրաստները, կոդոպտում պարսկական զորքին հացահատիկ հասցնող քարավանները»[4]: Հայ մելիքների ռազմական գործունեության մասին հիշատակություն կա նաեւ Նախիջեւանում՝ 1791 թ. Իբրահիմ խանի իրականացրած ռազմարշավի առնչությամբ: Տեղի Քյալբասալի խանի դեմ մղվող մարտերի ժամանակ կրած անհաջողությունից հետո «Իբրահիմ խանը, որն իր անկանոն հետեւակազորը Ղարաբաղում էր թողել, ճարահատյալ մարդ է ուղարկում մելիքների եւ յուզբաշների մոտ եւ վերադարձի հրաման տալիս»[5]:

Ասվածին հավելենք, որ Փանահն ու նրա որդի Իբրահիմը շինարարական աշխատանքներ իրագործելիս խելամտորեն օգտագործում էին նաեւ Արցախի բնակչության ֆիզիկական կարողությունները: Այսպես, օրինակ, երբ 1789 թ. Հարավային Կովկասին տիրելու համար Ռուսաստանի եւ Պարսկաստանի հակամարտությունն առկա էր, Իբրահիմ խանը Շուշի բերդի ամրացման նպատակով մելիքներից պահանջեց 100-ական մարդ եւ քանդելով հին պարիսպները՝ «հայ հմուտ վարպետների նախագծով կառուցեց ավելի ամուր եւ բարեշեն պարիսպներ»[6]:

Արցախի բնակչությունը Իբրահիմին մեծ նպաստ բերեց եւ Աղա-Մուհամմեդ խանի կողմից Շուշի բերդի պաշարման ժամանակ: Տեղանքի աշխարհագրական դիրքի փայլուն իմացության շնորհիվ՝ բերդի ժողովուրդը ոչ միայն ապաստանեց բերդի շրջակա քարայրներում, այլեւ դրանցից մեկում թաքցրեց Իբրահիմ խանի գանձերը[7]: Սա վկայում է, որ համընդհանուր պայքարի պահին, թեկուզ եւ առե-

1973, էջ 328-383:

3 Տե՛ս "Грамоты и другие исторические документы относящиеся Грузии", т. 2, часть I, СПб, 1891, էջ 434:

4 **Мирза Джемал Джеваншир**. История Карабага, Баку, 1959, с.80.

5 **Միրզա Յուզուֆ Ներսեսով**, Թարիխ-Ե-Սաֆի, Կենկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտ (պարսկ. ձեռ.), էջ 91(ա):

6 "Армяно-русские отношения", т.4, стр.252, Ереван. 1990.

7 **Ն. Զաքարեանց**, Պատմութիւն գաւառին Արցախու, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 2734, էջ 6:

րես, արցախահայության եւ Իբրահիմի միջեւ կար փոխըմբռնման եւ վստահության որոշ մթնոլորտ:

Խամսայի մելիքության պատմության վերաբերյալ հայկական աղբյուրներից, հիմնականում, շրջանառվում են Ռաֆֆու եւ Լեոյի աշխատությունները,[8] որոնք գրված են ժամանակին պահպանված հրամանների, հրովարտակների, բանահյուսական նյութերի եւ այլ կարգի վավերագրերի հիման վրա: Իբրեւ պատմագիտական աղբյուր վիմագրերի վերծանությունների առաջնեկ ուսումնասիրողներն են եղել Խաչիկ Դաղյանն ու Մակար Բարխուդարյանցը[9]:

Վերջերս Արցախի այս կամ այն հիմնախնդիրների վերլուծություններին են անդրադարձել Ք. Կոստիկյանը[10], Ա. Մաղալյանը[11]:

Արժեքավոր է Մելիք Եգանյաններին նվիրված ուսումնասիրությունը[12], որը սկզբնաղբյուրների եւ բանահյուսական նյութերի ապաղձով լուսաբանում է Դիզակի Մելիքության ողջ պատմությունը, նոր ժամանակների անցքերի հավելումով: Հակաթոռ Կաթողիկոս Իսրայելի գործունեությունը, որ բուն թեմայի առանցքն է, ժամանակագրորեն համընկնում է ԺԸ դ. կեսերից ԺԹ դ. սկզբների իրադարձություններին, բայց դրանք շարադրանքում տրված են թռուցիկ անցումներով եւ պատմական իրողությունների վերլուծությունները հիմնականում ճշտված են Ռաֆֆու եւ Լեոյի աշխատությունների հենքով: Ի դեպ, Արցախի պատմության այդ փուլը լծորդված էր ոչ միայն արտաքին գործոններով, այլեւ ներքին՝ ներպետական ու հոգեւոր պայքարի լուրջ խնդիրներով: Եթե պարսիկները արտաքին բացահայտ թշնամիներն էին, ապա երկրի ներսում ձեւավորված իրարամերժ խմբավորումները, որոնց թիկունքում կային արտաքին զորեղ ուժեր, իրենց ոլորտն էին ընդգրկել նաեւ հոգեւորականությանը, որի մի մասը, ելնելով օգտապաշտ, անձնական մղումներից ընդունեց ապազգային կեցվածք: Այդպիսին էր եպիսկոպոս Իսրայել հակաթոռ Կաթողիկոսը:

Արցախում հակաթոռ կաթողիկոսություն երեւույթը սկզբնավորվեց 1651 թվականից, երբ Ջրաբերդ գավառի Խոտորաշեն գյուղից մի քահանա Մռավ լեռան մոտ կառուցեց Երիցմանկանց վանքը եւ իրեն հռչակեց Կաթողիկոս: Նրան հաջորդեց Ներսեսը, որն իր մահկանացուն կնքեց 1763 թ., բայց մինչ այդ, հակառակ Էջմիածնի հրահանգի, որն արգելում էր ազգականներին ժառանգաբար պաշտոնավարել, նա հասցրեց իր եղբորորդի եպիսկոպոս Իսրայելին Կաթողիկոս հռչակել: Վերջինս գահակալեց ոչ թե Երիցմանկանց վանքում, այլ Գանձակում եւ հովանավորվեց սկզբում Շահվերդի, ապա նրա որդի Ջավադ խանների կողմից: Միաժամանակ (1762 թ.) Շուշիի կառավարիչ նշանակվեց Պարսկաս-

8 **Ռաֆֆի**, Խամսայի մելիքություններ, հ. 9, Երեւան., 1987, էջ 417-649, **Լեո,** նշվ. աշխ.:

9 Խ. Դաղյանի վերծանությունները պահվում են Մատենադարանի ֆոնդերում, ՀՊՊԿԱ, ֆ. 319, ց. 1, գործ 107, էջ 27: **Բարխուդարյանց**, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, 1999:

10 **Ք. Կոստիկյան**, Ղարաբաղի XVIII դ. պատմությունը ըստ Միրզա Ներսեսովի «Թարիխ-Ե սաֆի»-ի, Երեւան, 2001:

11 **Ա. Մաղալյան,** Վարանդայի մելիքությունները XVII-XVIII դդ., Երեւան, 2005:

12 **Գ. Աթայան**, Տող Բերդաքաղաքի պատմությունը, Երեւան, 2010:

տանի խորամանկ դիվանագիտության գինանոցում կրթված Փանահի որդի Իբրահիմը, որը հարկ եղած դեպքում օգտագործում էր հայ մելիքների նյութական ու զինական հնարավորությունները: Արդյունքում ջլատեց նրանց ուժերն ու դաժան հարված հասցրեց նրանց հայանպաստ գործունեությանը:

Իսրայելի՝ Գանձակը նստոց դարձնելու նպատակահարմարությունը կապված էր Նադիր Շահի մահից հետո, ի թիվս այլ կազմավորումների, այդ գավառի ձեռք բերած անկախության կարգավիճակով[13], եւ երբ 1762 թ. Իբրահիմը Վարանդայի կառավարչի պաշտոնն ստանձնեց, երկու գավառների հարաբերությունները թշնամական էին:

Իբրահիմը ձգտում էր հոր՝ Փանահի գործն ավարտին հասցնել՝ կազմալուծել մելիքությունները, տեր դառնալ ողջ Արցախին ու կայուն տեղ գբաղեցնել Հարավային Կովկասի տարածաշրջանում: Սակայն քաղաքական զարգացումներով պայմանավորված՝ նա հարկադրված էր մասնակիցը լինել մելիքների ներպետական բարդ պայքարին, անմիջական առճակատման գնալ Մուհամմեդ խան Ղաջարի ռազմարշավների ու դիվանագիտական խաղերով Ռուսաստանին հեռու պահել տարածաշրջանից:

Աղբյուրները բացատրություն չունեն, թե ինչո՞ւ Իսրայելը իր նստավայրը դարձրեց Գանձակը, այլ ոչ Երիցմանկանց վանքը: Թերեւս, տրամաբանական է մտածել, որ նա այդ քայլով փիրանում էր Դերբենտի, Շիրվանի, Շեմախիի, Շաքիի եւ Բաքվի հայկական թեմերի հասույթներին, միաժամանակ՝ Գանձասարում Կաթողիկոս ընտրելու համընդհանուր պահանջմունքից ելնելով, խուսափում Իբրահիմի հետապնդումներից:

Գանձասարում Կաթողիկոս օծելու անհրաժեշտությունը ոչ միայն ժողովրդի, այլեւ Իբրահիմի ցանկությունն էր: Իսկ երկրում հոգեւոր հենարան ունենալը Իբրահիմի գործունեության առաջնահերթ խնդիրներից մեկն էր եւ նրա կրոնական հանդուրժողականություն ցուցաբերելու հանգամանքը՝ միանգամայն ըմբռնելի: 1793 թվականին Էջմիածին մեկնող արցախահայերի 50 հոգիանոց հանձնախմբին նա իր կողմից կնքված փաստաթղթով հորդորեց Սիմոն Երեւանցի Կաթողիկոսին Հովհաննեսին օծել Գանձասարի Կաթողիկոս: Սակայն առաջինի փորձն անցավ անհաջող[14]: Երեք տարվա պայքարից հետո, երբ երկրում հոգեւոր խաղաղության համար անգամ Հովհաննեսը համաձայնեց ընդունել Իսրայելի կաթողիկոսական կարգավիճակը ու մերժում ստացավ Իսրայելից, Սիմոն Երեւանցին համաձայնեց Հովհաննեսին օծել Կաթողիկոս: Այնուհետեւ Թիֆլիսի Զաքարյա եպիսկոպոսի ուղեկցությամբ նրան Կաթողիկոսի օրինավոր փիտղոսով ուղարկեց Գանձասար:

ԺԸ դ. 90-ական թվականներին Արցախում տեղի ունեցող քաղաքական բարդ անցքերը[15] թուլացրել էին մելիքների նյութական ու զինական կարողություններ-

13 Տես **П.Петрушевский,** Очерки феодальных отношений в Азербайджане и Армении, Л., 1943, էջ 86:

14 **Տե՛ս Սիմէօն Երեւանցի,** Ջամբռ, ի Վաղարշապատ, 1873, էջ 89-91:

15 **Լեո,** նշվ. աշխ.:

ը, առաջացել էին նոր մելիքներ, որոնց մի մասը ծառայում էր Իբրահիմին: Այսպես Վարանդայի մելիք Շահնազարին փոխարինեց որդին՝ Ջումշուդը, Խաչենում Միրզախանին՝ որդին՝ Ալլահվերդին եւ այլն:

Իսկ փակավին հայկական կենսունակություն պահպանած մյուս մելիքները՝ Մեժլումը (Ջրաբերդ), Աբովը (Գյուլիստան) եւ Բախտամը (Դիզակ), հույս կապելով Ռուսաստանին՝ որոնում էին ազատագրական պայքարի նոր ուղիներ: Խնդրի քննարկման մտավոր օջախ դարձավ Գանձասարը, ուր Հովհաննես Կաթողիկոսի գլխավորությամբ հավաքվեցին երկրի առողջ ուժերն ու կազմեցին Ռուսաստանին ուղարկվելիք աղերսագիրը: 1785 թ. այն պիտի ուղարկվեր Գանձակ՝ Իսրայել Կաթողիկոսի ստորագրությամբ վավերացվելու համար: Ի դեպ, այդ ընթացքում Իսրայելի եւ Հովհաննեսի հարաբերությունները կայունացել էին եւ կար փոխադարձ վստահության մթնոլորտ:

Սակայն Գանձասարի ժողովի մասնակից Ալլահ Ղուլի Բեկը Իբրահիմին է հայտնում ոչ միայն աղերսագրի մանրամասները, այլեւ դրանց գտնվելու վայրը՝ Գանձակ, որտեղից սուրհանդակի միջոցով պիտի հասցվեր Թիֆլիս, ապա՝ Ռուսաստան:

Անմիջապես կողմնորոշվելով՝ Իբրահիմը Իսրայելին համայն Արցախի Կաթողիկոս նշանակելու շահագրգռությամբ, ձեռք է բերում փաստաթղթերն ու իր մոտ հրավիրելով Հովհաննես Կաթողիկոսին, մելիքներ Մեժլումին, Աբովին ու Բախտամին՝ դաժան հաշվեհարդար իրագործում նրանց դեմ: Հովհաննես Կաթողիկոսին 1786 թ. բանտում թունավորում են, Բախտամին աքսորում Պարսկաստան, իսկ Աբովն ու Մեժլումը հնարով փախչում են բանտից: Այս դեպքերից հետո 1787 թ. Խամսայի մելիքությունը փաստորեն կազմալուծվեց: Մելիք Մեժլումի եւ Աբովի պայքարը Արցախում նախկին քաղաքական կարգավիճակը վերականգնելու համար՝ անցավ ապարդյուն:

Այսպիսով, շահագրգիռ իշխող կարգավիճակ ձեռք բերելու համար տեղի ղեկավարության ներպետական ձգտումը եւ Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական բեկումնային գործընթացների մեկնարկը 80-ական թվականներից սկսած պայմանավորված էր Պարսկաստանի, Աղա-Մուհամմադ խանի, Ռուսաստանի եւ Իբրահիմի միջեւ տարվող պայքարով, Արցախում ստեղծվեց քառսային միվիճակ, որն ուղեկցվում էր սովի ու համաճարակների աննախադեպ ծավալով: Այս ամենից ժողովուրդը կորցրեց հասարակական հողն ու հուսախաբությունից դիմեց զանգվածային արտագաղթի՝ տեղի տալով Արցախում այլադավան էթնոսի արմատակալմանը:

Իսկ այդ ժամանակաշրջանում Իսրայել Կաթողիկոսը կարողացավ բարձրացնել իր վարկանիշը եւ առանց Էջմիածնի դրական լիցքերի, ստացավ համայն Արցախի Կաթողիկոսի տիտղոսը, բազմելով ոչ թե Գանձակում, այլ Ամարասում, ուր այդ տարիներին շինարարական մեծ աշխատանքներ էր ծավալում Մելիք Շահնազարը: Այսպիսով, նա դարձավ Մելիք Շահնազարի խորհրդականը եւ Իբրահիմի գործերի վստահելի անձը:

Այս իրողությունը հաստատվում է Մելիք Շահնազարի կտակի բովանդակությամբ[16]: Այն գրված է 1792 թ., կազմվել է Իսրայել Կաթողիկոսի կողմից Սիմեոն, Մելիքսեթ եւ Օհան վարդապետների ներկայությամբ, որում դրսեւորված է Իսրայելի համակրանքը Մելիք Շահնազարի ավագ որդու՝ Ջումշուդի հանդեպ, մի մարդու, որը վերջում դարձավ Իբրահիմի համակիրը:

Հավելենք, որ մեր գրամադրության տակ եղած վավերագիր հիշատակարանը պահվում է Ժնեւում՝ Ռուդոլֆ եւ Ալիսոն Կարապետյանների անհատական հավաքածոյում[17]: Հիշատակարանն ունի մի բովանդակալից առաջաբան-գրություն, որը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Իսրայել Կաթողիկոսի մասին:

Գրության բնագիրը հետեւյալն է.

«Յիշատակ է, զի է գրութիւնս յայսմիկ գրեան զի սրբազան հայրն Տիառն միահեծան երկրին Աղուանից Իսրայէլ կաթողիկոսն ի նահանկէ Ճարաբերդու (Ջրաբերդ - Ա.Ժ.) գոլով որդի Ապրէքս իշխանի ի մեծ սեռէ, եղբօրորդի եղեալ Ներսիսի մշտակրօն: Նա յրտէ (|) երեւացաւ ի ամանէ հայրապետութեանդ Ռ-ՉԿԲ (1762) եւ վարեաց ի իւ (40) եւ և (5) ամն նշանաւոր եւ զահիւք, ծերացեալ եւ զի աւուարինք (աւարի ենթարկվեցինք -Ա.Ժ.) եւ կցորդեալ ըստ կենացն, եւ եղբայրն զկնի իւր հրաշալի Կաթողիկոս ինքն վախճանեալ գնաց առ Քրիստոս իւաղաղական կենօք ի թուականին Ռ-ՄԾԷ (1808), յամսեանն յուլիսի Զ (6): Աղաչեմք հանդիպօղի զաղցա յիշել առ Քրիստոս փառք: Յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն»:

Այս հակիրճ գրության էությունն այն է, որ Իսրայել Կաթողիկոսը (1763-1808) եղել է Երիցմանկանց վանքի առաջնորդը (թեպետ նստել է Գանձակում), ավարի է ենթարկվել (թերեւս ռուս-պարսկական ընդհարումների ժամանակ), զահակալել է 40 տարի եւ 5 ամիս ու ամենակարեւորն այն է, որ իրեն համարում է օրինավոր Կաթողիկոս:

ԺԹ դ. սկզբներին Արցախում շարունակում էին գոյատեւել երկու հակաթոռ կաթողիկոսություններ. մեկը՝ Սիմեոնի գլխավորությամբ Երիցմանկանց վանքում, մյուսը՝ Իսրայելի գլխավորությամբ Ամարասում: Իսրայելը վախճանվեց 1808 թվականին:

ԺԹ դ. սկզբներին Արցախը արդեն կորցրել էր ոչ միայն մելիքական հզոր առաջնորդների վերջին մոհիկաններին, դադարել էր նաեւ հոգեւոր կենտրոն Գանձասարի գործունեությունը: Վերջին Կաթողիկոս Սարգիսը չճանաչվեց Էջմիածնի կողմից ու, հաստատվելով Վրաստանում՝ դարձավ սոսկ Հաղբատ վանքի շարքային մի հոգեւորական:

16 Տես **Լեո**, նշվ. աշխ., էջ 376-377:

17 Այն հրապարակվում է առաջին անգամ: